



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

## ԾԻԳԱԿՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՄԱՆ 25-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Վստահ ենք որ Ծիգակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը, Ծխական Խորհուրդը, Եկեղեցւոյ բոլոր կազմակերպութիւններու անդամներն ու հաւատացեալները մեծ ուրախութեամբ եւ նոր ծրագրումներով կը դիմաւորեն Եկեղեցւոյ օծման 25-ամեակը:

Ծիգակոյի մէջ մեր համայնքային կեանքը կազմակերպուած կը տեսնենք 1915 թուականէն սկսեալ՝ երբ գաղթական հայերը սկսած են համախմբուիլ եկեղեցւոյ շուրջ, անկէ ազնկալելով իրենց հոգեւոր, ազգային եւ ընկերային կեանքի սնունդը:

Տեղւոյն եւ շրջակայքի հայոց թիւը հետզհետէ աճելով՝ Ծիգակոյի մէջ աւելի զօրաւոր հիմքերու վրայ դրուեցաւ մեր եկեղեցական կեանքը: Եւ այսօր կը նշուի սեփական Եկեղեցւոյ օծման 25-ամեակը:

Հայ Եկեղեցին, մասնաւորաբար Միացեալ Նահանգներուն մէջ, մեր հաւատքի եւ աղօթքի տունը ըլլալով հանդերձ, է՛ եւ կը մնայ մեր ազգային, կրթական եւ ընկերային կեանքի գլխաւոր կոտանք:

Մենք կրնանք հաստատել որ Ծիգակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին հաւատարիմ մնացած է Հայ Եկեղեցւոյ աւանդութեանց եւ իր ստանձնած պատասխանատուութեանց՝ Աստուծոյ փառքին եւ իր հաւատացեալներու բարօրութեան համար:

Որպէս Առաջնորդ Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմին, կը շնորհաւորենք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ օծման 25-ամեակը եւ կ'օրհնենք Հոգեւոր Հովիւ, Ծխական Խորհուրդը եւ բոլոր հաւատացեալ ժողովուրդը: Կ'աղօթենք որ Տիրոջ հովանին անպակաս ըլլայ համայնքի բոլոր անդամներուն վրայէն:

Սիրոյ Ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Հոկտեմբեր 1989  
Նիւ Եորք, Ն.Ե.